ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/133

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Ն. Հակոբյանի (լիազորագիր՝ տրված 06.06.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.04.2022թ. թիվ 26/26-1/6781-2022 գրությամբ «Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 12.04.2022թ. թիվ 09/475 գրության հիման վրա, 19.04.2022թ. թիվ 26/26-1/6781-2022 գրությամբ նախաձեռնել է «Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի կապակցությամբ սույնով ներկայացնում եմ ընկերության դիրքորոշումը:

Սույն ընթացակարգը նախաձեռնվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքով, այն փաստերի հիման վրա, որ «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, հանձնաժողովը ընկերությանը առաջարկվել է շտկել անհամապատասխանությունները, սակայն դրանք չեն շտկվել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ համաձայն.

«Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

(...)

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը... »:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելու այս հիմքը կարող է դրսևորվել հետևյալ արարքներից որևէ մեկով

- պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, կամ

- գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Ընդ որում, նշված արարքները պետք է հանգեցրած լինեն պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Քննարկվող դեպքում պայմանագրով նախատեսված պարտավորության խախտումը բացակայում է, քանի որ պայմանագիր չի կնքվել:

Նախաձեռնողը նկատի է ունեցել, որ առկա է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչի արդյունքում «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Գնման գործընթացը քաղաքացիաիրավական հարաբերություն է կապված պատվիրատուին ապրանքների մատակարարման պայմանագիր կնքելուն և կատարելուն: Քաղաքացիաիրավական հարաբերություններում պարտավորությունը կարող է ծագել պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նշված այլ հիմքերից, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի:

Եթե խոսում ենք գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության մասին, ապա այդ պարտավորությունը պետք է ծագած լինի սուբյեկտի ազատ կամահայտնությամբ, այսինքն գնման գործընթացում պայմանագրային հարաբերություններում:

Գտնում եմ, որ քննարկվող դեպքում հայտում նշված տեխնիկական բնութագրի հատկորոշիչը հրավերով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու պարտավորությունը չպետք է դիտվի գնման գործընթացի քաղաքացիաիրավական հարաբերություններում «Էֆֆեկտ գրուպ» ՓԲ ընկերության ստանձնած պարտավորություն:

Ընդունում եմ, որ նշված պարտավորությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորություն է, դրա չկատարումը հանդիսանում է խախտում և հիմք է հանդիսանում հայտն անբավարար գնահատելու և մերժելու համար: Սակայն օրենքի այս պահանջն ընդամենը գնման գործընթացին մասնակցելու պարտադիր պայման է, և ոչ թե գնման

գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորություն, իսկ այդպիսի պահանջը խախտելը հանդիսանում է գնման գործընթացին մասնակցելու պայմանի չապահովում, և ոչ թե գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2022թ. թիվ 4 արձանագրության մեջ նշված է. «Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստանված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ի... հայտը գնահատել անբավարար և մերժել»:

Հայտը անբավարար գնահատելու և մերժելու հիմքը սահմանված է Օրենքի 34-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն, «հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապաասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

Ինչպես երևում է, հայտն անբավարար գնահատելու և մերժելու հիմք է ոչ թե ստանձնած պարտավորության խախտումը, այլ հրավերի պայմաններին չհամապատասխանող հայտ ներկայացնելը: Վերջինս թեև հիմք է անբավարար գնահատելու և մերժելու համար, սակայն հիմք չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ցանկանում եմ նաև նշել, որ անհամապատասխանության չշտկելը եղել է տեխնիկական թերացում պայմանավորված ընկերության աշխատակցի համակարգչի խափանման հանգամանքով, այդ թերացումը պայմանավորված չէ շտկում ներկայացնելուց խուսափելու հանգամանքով կամ այլ շարժառիթով: Այսինքն, այս թերացումը չպետք է հիմք ընդունվի ընկերության, որպես գնման գործընթացին մասնակցող սուբյեկտի, մատակարարման հարաբերություններում նրա վարքագծի բարեխղճությունը, արտադրանքի որակը գնահատելու և գնման գործընթացներին մասնակցության իրավունքը սահմանափակելու համար:

Ինչ վերաբերում է հետևանքին, ապա խնդրո առարկա թերացումն ընդամենը հանգեցրել է նրան, որ ընկերությունը չի համարվել ընտրված մասնակից, որը մեր գնահատմամբ չի հանգեցնում պատվիրատուի կամ պետության համար բացասական հետևանքների:

Ելնելով վերոգրյալից, խնդրում եմ «Էֆֆեկտ գրուպ» ՓԲԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/133 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.04.2022թ. թիվ 09/475 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ 2022 թվականի մարտի 21-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգի՝ www.eauction.armeps.am կայքի միջոցով շինանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/7-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ: Գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել նաև «Էֆֆեկտ Գրուպ» փակ բաժնետիրական և «ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները:

Գնահատող հանձնաժողովը 2022 թվականի ապրիլի 06-ի թիվ 3 որոշմամբ կասեցրել է նիստը, և ի թիվս այլ մասնակիցների «Էֆֆեկտ Գրուպ» փակ բաժնետիրական և «ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին Համակարգի միջոցով տեղեկացրել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտերում առկա անհամապատասխանությունները: «Էֆֆեկտ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերությունը թիվ 42 չափաբաժնի մասով, «ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ» ՍՊԸ-ն թիվ 1, 9, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 24, 25, 30, 44, 45, 46, 62 չափաբաժինների մասով սահմանված ժամկետում չեն շտկել առկա անհամապատասխանությունները հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42 րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշել է «Էֆֆեկտ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերության (թիվ 42 չափաբաժնի մասով) և

«ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (թիվ 1, 9, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 24, 25, 30, 44. 45, 46, 62 չափաբաժինների մասով) կողմից ներկայացրած հայտերը գնահատել անբավարար և մերժել:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Ձեզ ենք տրամադրում «ԷԱՃԱՊՁԲ-2022/7-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին վերաբերվող անհրաժեշտ փաստաթղթերը՝ «Էֆֆեկտ Գրուպ» փակ բաժնետիրական և «ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների տվյալները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/133 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/133 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/133 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/7-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.04.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝ թիվ 42 չափաբաժով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված «ներկի ծածկունակությունը ոչ ավել 155 գ/մ2» հատկորոշիչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ինչպես նաև բացակայում է «անփայլ» հատկորոշիչը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել իր կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ թիվ 42 չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված «ներկի ծածկունակությունը ոչ ավել 155 գ/մ2» հատկորոշիչը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, ինչպես նաև բացակայել է «անփայլ» հատկորոշիչը և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.04.2022թ. թիվ 26/26-1/6781-2022 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 12.04.2022թ. թիվ 09/475 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ <u>գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,</u>

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Այսպես, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/7-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.04.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝ թիվ 42 չափաբաժով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված «ներկի ծածկունակությունը ոչ ավել 155 գ/մ2» հատկորոշիչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ինչպես նաև բացակայում է «անփայլ» հատկորոշիչը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել իր կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ թիվ 42 չափաբաժնով ներկայացված ապրանքի

տեխնիկական բնութագրում նշված «ներկի ծածկունակությունը ոչ ավել 155 գ/մ2» հատկորոշիչը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, ինչպես նաև բացակայել է «անփայլ» հատկորոշիչը և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն արձանագրված անհամապատասխանությունները չի շտկել, այսինքն՝ Ընկերությունը «ԷԱՃԱՊՁԲ-2022/7-2-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.04.2022թ. թիվ 26/26-1/6781-2022 գրությամբ «Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**